

Ռեհիդ Սոլյուսեն 330 մլ

Դեղածև. Ներքին ընդունման լուծույթ բանանի համով:

Բաղադրություն. 5 մլ լուծույթը պարունակում է՝ 17.5 մգ նատրիումի քլորիդ, 14.5 մգ նատրիումի ցիտրատ, 12.5 մգ կալիումի քլորիդ, 55.7 մգ գլյուկոզա:

Օժանդակ նյութեր՝ նատրիումի բենզոատ, լիմոնաթթվի մոնոհիդրատ, բանանի բուրավետիչ, մաքրված ջուր:

Դեղաբանական խումբ. էլեկտրոլիտների դեղեր ածխաջրերով: Ներքին ընդունման ռեհիդրատացիոն լուծույթ:

Դեղաբանություն

Ռեհիդ Սոլյուսենի կիրառման հիմնական նպատակն է - թթվահիմնային հավասարակշռության վերականգնումն է, որն առաջացել է էլեկտրոլիտների կորստի հետևանքով փոքրլուծության և փսիման ժամանակ: Դեհիդրատացիայով հիվանդների մոտ, այս պրեպարատով օրալ ռեհիդրատացիան նպաստում է, արագ ռեհիդրատացիայի: Ռեհիդ Սոլյուսենը պարունակում է հավասարակշռված ֆանակով էլեկտրոլիտներ ջրում: Իոնային հավասարակշռության հաստատման գործում էլեկտրոլիտները կատարում են հիմնական դեր: Ցիտրատի դերը կայանում է ացիդոզի կորեկցիան, որն առաջանում է փոքրլուծության և փսիման ժամանակ: Ցիտրատը նաև բարձրացնում է նատրիումի խոնների ներծծումը, և համարվում թ ավելի ստաբիլ բիկարբոնատների համեմատ: էլեկտրոլիտների կոմբինացիան խթանում է ջրի և էլեկտրոլիտների ներծծումը ստամոքս-աղիքային տրակտից, դրանով կանխելով դեհիդրատացիան փոքրլուծության և փսիման ժամանակ:

Գլյուկոզան նպաստում է ազերի և ցիտրատների աբսորբցիային, ինչը օգնում է պահպանել մետաբոլիկ աջիդոզը:

Ջուր: համապատասխան ֆանակությամբ նշանակալի է դեհիդրատացիայի կորեկցիայի համար:

Կիրառման ցուցումներ

- Երեխաների և մեծահասակների մոտ երկարատև փոքրլուծության կամ փսիման ժամանակ՝ ջրա-աղային բալանսը վերականգնելու նպատակով
- Սուր փոքրլուծության (խոլերա) ժամանակ աջիդոզի ուղղում
- Փոքրլուծություն՝ մեղմ և չափավոր ջրազրկմամբ (օրինակ՝ երեխաների ֆաշի կորուստ 3-9%);
- Ջերմային սրբես ջրաէլեկտրոլիտային հավասարակշռության խախտմամբ;

Որպես կանխարգելիչ միջոց՝ ֆիզիկական և ջերմային ծանրաբեռնվածության ժամանակ, որը կարող է առաջացնել առատ քրտնարտադրություն:

Կիրառման ձև և դեղաչափում

Լուծույթի պահանջարկվող ֆանակը կախված է մարմնի ֆաշից և տարիքից, ինչպես նաև վիճակի ծանրությունից և աստիճանից: Լուծույթը պետք է օգտագործել փոքր կումերով, յուրաքանչյուր քույլ կղազատումից հետո:

Ծանր ջրազրկման դեպքում, երբ մարմնի ֆաշը նվազում է 10%-ով, ռեհիդրատացիան պետք է իրականացվի ներերակային ներարկումով: Մեղմ և չափավոր ջրազրկման դեպքում Լուծույթի ընդունման ֆանակը կախված է մարմնի ֆաշից և ջրազրկման աստիճանից: Ջրազրկման սկզբից առաջին 6-10 ժամվա ընթացքում դոզան կարող է հասնել 30-60 մլ / կգ մարմնի ֆաշի: Օրական մաքսիմում դեղաչափը 65 մլ/կգ մարմնի ֆաշ: Հետագա ջրազրկման շարունակման դեպքում, անհրաժեշտ է շարունակել դեղի օգտագործումը:

Թերև և չափավոր ջրազրկում ունեցող մեծահասակները և երեխաները հետևում են աղյուսակում տրված տվյալներին:

Մարմնի ֆաշ/կգ	≥5	5-7.9	8-10.9	11-15.9	16-29.9	>30
Մաքսիմում օրական կիրառումը Լուծույթի / մլ	330 մլ	330-520	520-720	720-1000	1000-2000	2000

Դեհիդրատացիայի նախագուշացում

Մարմնից հեղուկի կորուստը կանխելու համար Ռեհիդը օգտագործվում է ավելի փոքր ֆանակությամբ: Ռեհիդի օգտագործումը պետք է սկսել, երբ սկսվում է փորլուծությունը: Որպես կանոն, Լուծույթը պետք է օգտագործել 3-4 օր, օգտագործումը ընդհատվում է փորլուծության վերացումից հետո: Ջրազրկումը կանխելու համար միանվագ դեղաչափը կարող է լինել 5-15 մլ / կգ մարմնի ֆաշի:

- Մինչև 10 կգ մարմնի ֆաշ ունեցող երեխաների համար. 50-100մլ յուրաքանչյուր ջրիկ կղանքից հետո
- Մեծահասակներին և 10 կգ-ից ավել ֆաշ ունեցող երեխաներին. 100-200մլ յուրաքանչյուր ջրիկ կղանքից հետո: Եթե երեխան նաև վսխում է նշված ֆանակությունը պետք է տալ քիչ ֆանակությամբ, (5-10մլ յուրաքանչյուր 5 րոպեից հետո), որից հետո կարելի է ավելացնել ֆանակությունը մինչև կարողանա երեխան նորմալ խմել:

Հակացուցումներ

Երիկամների ֆունկցիայի խանգարում

Շափարային դիաբետ

Գիտակցության կորուստ

Աղիքային անանցանելիություն

Դեղի բաղադրատարրերի նկատմամբ բարձր զգայունություն

Նախադրուշացումներ

Հիպերկալիեմիայով և ֆենիլկետոնուրիայով մարդկանց չի կարելի կիրառել:

Ռեհիդ Սոլյուսոնը չի կարելի խառնել ջրի կամ այլ հեղուկների հետ, ֆանի որ այն պատրաստ է օգտագործման:

Կարելի է օգտագործել հղիության և կրծքով կերակրման ժամանակ հաստատված դեղաչափերով:

Չի կարելի գտագործել դեղը մինչև 3 ամսական երեխաներին առանց բժշկի հետ խորհրդակցելու:

Թողարկման ձև

Պլաստիկ օրտ 330 մլ:

Պիտանիության ժամկետ

2 տարի:

Պահպանման պայմաններ

Պահել չոր տեղում, 25°C-ից ցածր, երեխաներից անհասանելի վայրում: Բացելուց հետո այն կարող է օգտագործվել 48 ժամվա ընթացքում:

Բաղադրման կարգ

Առանց դեղատոմսի: